



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՏՀ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԱԾ
ՏՏՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՆ



ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ОГО ВЕКА**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրապարակվում է ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀԵՐԴԻ ՆԱԽԱԳԱհ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ <ՊՏՀ< ուեկյոր, պ.գ.դ., այրոֆեսոր

ԽՄՔԱԳՐԱԿԱՆ ԽՈՐԻՌՈՒՐԴ՝

- | | |
|---------------------------|---|
| ԴԻԱՍԱ ԳԱԼՈՅԱՆ - | ՀՊՏՀ միջազգային դրվեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դր.գ.դ., դրցենք |
| ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - | ՀՊՏՀ բնօգդագործման դրվեսագիլուրային ամբիոնի վարիչ, դր.գ.դ., պրոֆեսոր |
| ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - | ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և առողջիկի ֆակուլտետի դեկան, դր.գ.դ., պրոֆեսոր |
| ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - | ՀՊՏՀ գիլուրային և ասպիրանտուրայի բաժնի պետ, դր.գ.թ., դրցենք |
| ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - | ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, դր.գ.դ., պրոֆեսոր |
| ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - | ՀՊՏՀ գրանցության և փոխարքության պատմի պետ, դր.գ.թ., դրցենք |
| ՅՈՒՐԻ ՍՈՒԿԱՐՅԱՆ - | ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., դր.գ.դ., պրոֆեսոր |
| ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - | ՀՊՏՀ պրոռեկտոր, դր.գ.դ., պրոֆեսոր |

ՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
S 778 հնարավորություններ: <ՊՏԾ< 27-րդ գիտաժողովի նյութեր / <ՊՏԾ<: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տարբերակ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիրաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորին Հայաստանի պետական գյուղեսագիրական համալսարանի 27-րդ գիրաժողովի բացման առթիվ և ցանկանում են շնորհակալություն հայրնել գիրաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել գյուղեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակ հարցերի նկարմամբ:

Մեր համալսարանի գործադրության մեջ նշանակած է գյուղական գիրաժողովները գեղեցիկ պահպանությամբ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիրական գործունեությունն արդացողություն այլ ձևաչափեր նույնականացնելու համար: Հայարդությամբ եմ նշում, որ հետազողական համալսարան դառնալու և մեր պետության գյուղեսական կյանքին մասնագիրական մասնակցություն ունենալու իմ գեղականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազողական կենտրոնի գործունեությունն այսօր դաշտի է նշանակալի արդյունքներ. այսպես ոչ միայն իրականացվում են հանրապետության գյուղեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազողություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ գործադրությամբ կազմակերպումը գիրական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական գործեց գիրառուսումնական լարորագորիաների մեջնարկը, ինչը գիրական դրամաշնորհներ, գիրառուսումնական խմբեր և գիրահետքազողական կյանքի աշխատավայր միրված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոդելումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի գործադրությունը եւ հավելապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիրական ներուժը, ցոյց դա համալսարանում գիրական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիրաժողովի հիմքում գյուղեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցոյց են դնում մեր դարաշրջանի մարդասիրավերներն ու հնարավորությունները: Խսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չեն պարբեր թողնեն գյուղեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ գյուղեսության:

Հուսով եմ, որ գիրաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կրա մասնագետներին ներկայացնելու իրենց մոդելումները, բացահայտելու գիրաժողովի խորագրում արդացողված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխատությամբ եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկուր, պրոֆեսոր

with the aim of mastering the best models and minimizing the negative consequences. For this reason, this article examines the experience of carrying out the industrial policy of developed countries and BRICS countries with the aim of introducing this experience within the framework of the EAEU.

ՀՈՅԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

Տնտեսագիրության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. Զինասպան, աճի դեմք, սոցիալիզմ և շուկա, ինովացիոն գոնություն, գիտական կենտրոն, արդյունաբերական արդիականացում, հարուկ գոնություն, գույք, գիտական պարկ, չորս արդիականացումներ

XX դարի երկրորդ կեսից սկսվեց անցումը սոցիալ-գոնության զարգացման ինովացիոն (նորարարական) ուղղություն: Դա յուրաքանչյուր երկրի համար ապահովում է որակապես նոր մակարդակ և մրցունակություն: Մի շաբթ զարգացող երկրներ ձգվում են արդյունավել գիտական քաղաքականության իրականացման, օպարերերյա գործնական փորձի փոխառնմամբ՝ ինովացիոն ներուժի հնարավորինս արագ ձևավորման: Զինասպանն ինովացիոն ուղմակարության իրականացման ոլորտում ամենահաջողված երկրներից մեկն է, որպես գիտության որակի, տեխնոլոգիաների և շուկայական մեխանիզմների կիրառումը հնարավորություն է դվել արագացնելու գիտահետազոտական մշակումների առևտույնացումը և որա շնորհիվ դառնալու զարգացած երկրների գլխավոր մրցակիցը:

Գլոբալ մրցակցության պայմաններում համաշխարհային տնտեսական ասպարեզում առաջատար դիրքեր զբաղեցնելու հավակնություններ ունեցող երկրներից պահանջվում է ինովացիոն զարգացման բարձր մակարդակ: Այն երկիրը, որը փող չի ծախսում սեփական ինովացիաների վրա, «կերակրում» է ուղիղ տնտեսությունը:

Այդ առումով, Զինաստանը չի թաքցնում առաջատար ինովացիոն գերտերություն դառնալու իր հավակնությունները: Վերջին քսան տարիների ընթացքում, ապահովելով տնտեսական աճի բարձր տեմպեր (տարեկան 9-10%), սկսած 2010 թ., Զինաստանին հաջողվել է ՀՆԱ արտադրության ծավալով աշխարհում զբաղեցնել երկրորդ հորիզոնականը՝ միաժամանակ մնալով խոշորագույն արտահանող առաջատար երկիր, հետևում թողնելով ԱՄՆ-ին և Գերմանիային: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ 2015 թ. Զինաստանն արտադրել է համաշխարհային ՀՆԱ-ի 14.8%-ը: Դա 2.5 անգամ գերազանցում է ճապոնիայի և 3.2 անգամ՝ Գերմանիայի համապատասխան ցուցանիշը¹:

¹ <http://businessviews.com.ua/ru/economy/id/krupnejshie-ekonomiki-mira-1540/>

Տնտեսական աճի տեմպերը 9% մակարդակում պահպանելու և բնակչության եկամուտները բարձրացնելու համար չինական ընկերությունները պարտադրված են մշակելու, արտադրելու և արտահանելու ամենաժամանակակից և որակյալ արտադրանքը:

Անհրաժեշտ է փաստել, որ Չինաստանը գիտատեխնիկական զարգացման նկատմամբ դրսևորել է հետևողական և աստիճանական մոտեցում, սակայն ինովացիաները կյանքի է կոչել ստիպողաբար՝ հաղթահարելով քաղաքական-տնտեսական յուրաքանչյուր հաջորդ փուլում երկրի առջև ծառացող դժվարությունները: Այդ տեսանկյունից, կարելի է առանձնացնել Չինաստանի ժողովրդական Հանրապետության ինովացիոն տնտեսության զարգացման երեք փուլ՝ սկսած 1949-ից մինչև ներկա ժամանակաշրջանը:

Առաջին փուլ ընդգրկում է 1949-1980-ական թթ. կեսերը, որը բնութագրվում է որպես «ոչ ազատական» քաղաքական համակարգ՝ ակտիվ արդյունաբերականացմամբ և ազգային տնտեսական մոդելի ձևավորմամբ: Սոցիալիստական պլանային վարչակարգի պայմաններում Չինաստանում գերակշռում էր ինովացիաներ ստեղծելու գծային, աստիճանակարգային (հիերարխիկ) մոդելը՝ տնտեսության արդիականացման գործում պետության մեջ դերակատարությամբ: Տարբեր վարչական կազմավորումներում ստեղծվում էին գիտահետազոտական ինստիտուտներ, որոնք լուծում էին նաև ինովացիոն խնդիրներ: Այդ առումով, հսկայական էր գիտությունների ակադեմիայի դերը, որը, մի շարք այլ գիտական կենտրոնների հետ մեկտեղ, իրականացնում էր հիմնարար հետազոտություններ: Ճյուղային նախարարությունների հովանու ներքո ստեղծվել էին նաև արդյունաբերական, գիտահետազոտական ինստիտուտներ, որոնք իրացնում էին կիրառական նախագծերն ու մշակումները:

Ինովացիոն աստիճանակարգության հաջորդ մակարդակում ներկայացված էին տարածաշրջանային պետական գիտական կենտրոնները, որոնք լուծում էին տեղական նշանակության խնդիրներ: Բարձրագույն կրթությունը, լինելով հարաբերականորեն թույլ խաղում էր երկրորդական դեր, միայն երբեմն էր համագործակցում հետազոտական ինստիտուտների հետ: Բուհական համակարգն այդ ժամանակ զբաղված էր բարձրորակ կարբեր պատրաստելու առաջնահերթությամբ և, փաստորեն, գիտահետազոտական աշխատանքներով չէր զբաղվում:

Ինչ վերաբերում է տեխնոլոգիական ինովացիաների և ինովացիոն ապրանքների շուկա դրւումը բերելուն, ապա տնտեսության պլանային բնույթին համապատասխան, այդ գործառույթն իր վրա վերցրել էր պետությունը:

Մեկ այլ բնութագրիչ երևոյթ ևս առկա էր. ինովացիոն մշակումները, մի շարք դեպքերում, իրենց վրա կրում էին ՉԺՀ իշխող դասի քաղաքական առաջնահերթությունները: Ուստի ինովացիոն քաղաքականությունը նպատակաուղղված էր ոչ այնքան ռազմավարական առաջխաղացմանը, որքան ներքին և արտաքին կայունության ապահովմանը:

Իհարկե, նման համակարգը չէր կարող խուսափել պլանային տնտեսության ավանդական ծախողումներից: Մասնավորապես՝ ձեռնարկությունները կողմնորոշված էին դեպի արտադրության զարգացման էքստենսիվ ուղին և շահագրգոված չէին իրենց գործունեության արդյունքների արդյունավետության, շահութաբերության մակարդակների

բարձրացման, մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի պաշտպանության մեջ: Ի վերջո, կարելի է եզրակացնել, որ այս փուլում ՀԺՀ-ը լրջագույն ինովացիոն խնդիրներ իր առջև չեր դրել, այլ ձգուում էր ստեղծել հարաբերականորեն ժամանակակից արդյունաբերական տեխնոլոգիական հիմք:

Սակայն, Զինաստանի քաղաքական և տնտեսական համակարգերի զարգացմանը զուգահեռ, ինչպես նաև, կապված նոր գլոբալ մարտահրավերների հետ, երկրի ղեկավարությունը ստիպված էր արմատապես փոփոխել ինովացիաների խթանման մոտեցումներ՝ չիրաժարվելով պետական վերահսկողությունից և կարգավորումից:

Երկրորդ փուլ ընդգրկում է 1970-ական թթ. վերջերից մինչև 2000-ական թթ. կետրը: Այս փուլը բնութագրվում է արդյունաբերության արդիականացմամբ և աշխատանքի բաժանման համաշխարհային համակարգին ինտեգրմամբ:

Զինաստանում իրականացվեցին բարեփոխումներ, որոնք թույլ տվեցին անցում կատարել տնտեսության խորհրդային մոդելից սոցիալիստականին՝ հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները: Զինաստանի կոմունիստական կուսակցությունը պետպանը և շուկան ընդունեց որպես տնտեսության կարգավորման միջոցներ, այլ ոչ թե գաղափարական և տնտեսական հակադրություններ: Այնուհանդերձ, տնտեսության առաջատար և ռազմավարական ճյուղերը շարունակեցին մնալ պետական վերահսկողության ներքո:

Բարեփոխումներն իրականացվում էին Զինաստանի համար ոչ բարենպաստ միջավայրում, քանի որ երկիրը չուներ միջազգային դաշնակիցներ: Ե՛վ Արևմուտքի, և՛ ԽՍՀՄ-ի հետ երկիրը, փաստորեն, գտնվում էր թշնամական հարաբերությունների մեջ: Այդ իրավիճակում Զինաստանը հրաժարվեց պրոլետարական ինտերնացիոնալիզմից և ընտրություն կատարեց՝ հօգուտ «չինական միասնության» գաղափարի: Մասնավորապես՝ երկրի իշխանությունները դիմեցին չինական էթնիկական բիզնեսի արտասահմանյան ներկայացուցիչներին՝ կոչ անելով օգնել հայրենիքին, ընդ որում, ոչ առանց շահադիտական նպատակների: Ներդրողները պետք է օգտվեին մեծ արտոնություններից: Հայրենակիցների կողմից ստեղծված ձեռնարկությունները մի քանի տարի ամրողությամբ ազատվում էին հարկերից, բացի դրանից, նրանց տրամադրվում էր էժան աշխատուժ, որի օգտագործման համար ևս հարկեր չէին վճարվում: Դա մի քանի անգամ ավելի էժան էր Հռնկոնդի և Թայվանի աշխատուժից, որը սովոր էր աշխատելու խստագույն կարգապահության պայմաններում:

Ինովացիոն փորձաքննության իրացման նպատակով երկրում ստեղծվեցին 18 հատուկ տնտեսական գոտիներ, որոնց տրվեցին ինովացիոն և հարկային արտոնություններ: Դրանք էլ դարձան Զինաստանի «աճի կետերը» և օտարերկրյա կապիտալի ձգողության կենտրոնները: Բարեփոխումների իրականացման 30 տարիների ընթացքում Զինաստանը ներգրավեց 860 մլրդ ԱՄՆ դոլարի հասնող օտարերկրյա ուղղակի ներդրումներ: Այդ նույն ժամանակահատվածում ստեղծվեցին օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ 650 հազար ձեռնարկություններ, որոնք ոչ միայն վերացրին տնտեսության մի շարք ճյուղերի կախվածությունը ներմուծումից, այլև դարձան համաշխարհային շուկայում ապրանքների առաջատար մատակարարներ: Արդյունքում Զինաստանը բարձրտեխնոլո-

գիական մեքենաշինական արտադրանքի մատակարարման գծով առաջատար դիրքեր գրավեց՝ 2002թ. ապահովելով արդյունաբերական ապրանքների արտահանման 500% աճ¹:

1982 թ. ընդունվեց սոցիալ-տնտեսական ոլորտում ինովացիաների հատուկ ծրագիր կամ, այսպես կոչված, հարձակողական պլան: Նման «հարձակման» արդյունքը եղավ գիտական պարկերի ձևավորումը, որոնք պետք է հաղթահարեին Չինաստանի գիտատեխնիկական հետամնացությունը՝ Արևմուտքի առաջատար երկրների համեմատությամբ: 1985 թ. առաջին գիտատեխնիկական պարկը ստեղծվեց Շենչժենում, որը դարձավ տեխնոլոգիաների և ինովացիաների աղբյուր: Տասը տարվա ընթացքում այստեղ ստեղծվեցին ավելի քան 90 տեխնոլոգիաներ և ապրանքներ: Չինական «Չժուչժեն» ինտեգրված համակարգչային համակարգը, «Քսենտոն» փոքրածավալ ռենտգենյան սարքը աշխարհում ճանաչվել են լավագույնը:

1985 թ. Չինաստանում տարածում է ստացել նաև վենչուրային ֆինանսավորումը: Ընդհանուր առմամբ, վենչուրային ընկերությունների կողմից կատարված ներդրումների ծավալը 2004 թ. հասավ 3.5 մլրդ ԱՄՆ դոլարի²:

Տնտեսության արդիականացման սկզբնական փուլում ձևավորվել էր տնտեսության զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, որը հենվում էր տեխնոլոգիաների ներմուծման, արտահանման գոտիների, գյուղատնտեսական շրջաններում աշխատատեղերի ստեղծման, քաղաքաշինության և ներքին պահանջարկի բարձրացման, ենթակառուցվածքների շինարարության վրա:

1986 թ. մարտին ընդունվեց «863» ծրագիրը, որի նպատակը բարձր տեխնոլոգիաների զարգացումն էր, այն հաշվով, որ 2000 թ. հետո հող նախապատրաստվի երկրի տնտեսության կայուն զարգացման համար: Ծրագրում գերակա ճանաչվեց ութ ոլորտ, այդ թվում՝ էներգետիկան, ավտոմատիկան, տիեզերքի յուրացումը, բիոտեխնոլոգիաները, նորագույն նյութերը, IT տեխնոլոգիաները, լազերները և համաշխարհային օվկիանոսի յուրացումը:

Եվ, վերջապես, **երրորդ փուլը** (2000-ական թթ. կեսերից մինչև ներկա ժամանակաշրջանը) կապված է նորամուծությունների զարգացման հետ: Այդ նպատակով Չինաստանի ղեկավարությունն առանձնացրեց մի շարք առավել կարևոր խնդիրներ՝

- նոր արդյունաբերական երկրին հարիր տնտեսական բազայի ձևավորում,
- սեփական նորամուծությունների զարգացման համար բարենպաստ քաղաքական միջոցառումների մշակում և իրականացում,
- բազային գիտատեխնիկական համակարգի ձևավորում:

Ի դեպք, վերջին 10-15 տարիներին Չինաստանը մշտապես ավելացնում է գիտության ֆինանսավորումը, և պատահական չէ, որ 2016 թ. այդ ոլորտում կատարված ներդրումների ծավալը կազմել է 234 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2000 թ. 12.9 մլրդ դոլարի դիմաց: Ներկայումս ՀԱԱ-ում ԳՀՓԿԱ ծախսերի բաժինը 2000 թ. 1.52%-ից հասել է 2.11%-ի³:

¹ Кирillov C., Иновация в Китае - развивать и покупать, <http://www.chinapro.ru/rubrics/2/1925>

² Иновации в строю, //<http://www.kommersant.ru/doc/666549>

³ <http://russian.cri.cn/news/homeList/380/20171011/36844.html>

Գիտատեխնիկական զարգացումը դեռևս 1978 թ. հայտարարված «Զորս արդիականացում» ծրագրի բաժիններից մեկն է:

Այսպիսով՝ տեխնոլոգիական ինովացիաները չինական տնտեսության կայուն զարգացման հրամայականներից են: Վերջին երկու տասնամյակների ընթացքում Չինաստանի կողմից կապիտալի անբավարության հիմնախնդիրը լուծելու նպատակով ներգրավված օտարերկրյա ուղղակի ներդրումները դարձել են նոր գաղափարներ, նոր տեխնոլոգիաներ և նոր փորձ ստանալու գործիքներ: Արևմտյան նորորոշներին Պեկինն առաջարկել է «Չինական շուկայի հասանելիություն՝ ժամանակակից տեխնոլոգիաների փոխանակման դիմաց» բանաձևը: Առևտի համաշխարհային կազմակերպությանն անդամագույնուց հետո Չինաստանը ձգտում է օտարերկրյա ներդրումներն ուղղել բարձրտեխնոլոգիական և բարձր ավելացված արժեք ստեղծող ճյուղեր:

Առանձնահատուկ ջանքեր ներդնելով արտահանման խթանման ուղղությամբ՝ երկիրը ձգտում է ստացված արժութային հասույթը ծախսել օտարերկրյա տեխնոլոգիաների գնման վրա: Դրան զուգահեռ, ստեղծվել է համաշխարհային մակարդակի գիտատեխնիկական բազա: Բավական է փաստել, որ Չինաստանը ԳՀՓԿԱ վրա կատարվող ծախսերի գծով աշխարհում գրավում է երկրորդ տեղը:

Համակարգչային արտադրանքի արտահանման ծավալը 2004 թ. առաջին անգամ հատեց հարյուր միլիարդի սահմանը և կազմեց 129.652 մլրդ դոլար: 2016 թ. այդ նույն ապրանքախմբի արտահանման ծավալը կազմել է 553.169 մլրդ դոլար¹: Դրանում հիմնական դեր են խաղացել փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք տեխնիկական ինովացիաների իրացման առումով ամենադիմայիկ տնտեսական օլակներն են:

ЗОЯ ТАДЕВОСЯН

ИННОВАЦИОННЫЕ ПРИОРИТЕТЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ КИТАЯ

Ключевые слова: Китай, темпы роста, социализм и рынок, инновационная экономика, научный центр, промышленная модернизация, специальная экономическая зона, научный парк, четыре модернизации

Начиная со второй половины XX века начался переход на инновационный путь социально-экономического развития. Это обеспечивает качественно новый уровень и конкурентоспособность для каждой страны. Ряд развивающихся стран стремятся посредством осуществления эффективной научной политики, обмена иностранной практики как можно быстрее создать достаточный инновационный потенциал. Китай является одной из самых успешных стран в реализации инновационной стратегии, где использование научного качества, технологий и рыночных механизмов дало возможность ускорить коммерциализацию научных исследований и тем самым стать главным конкурентом развитых стран.

¹ http://trademap.org/Country_SelProductCountry_TS.aspx?nvpm=1|156||||85|||2|1|1|2|2|1|2|1|1

ZOYA TADEVOSYAN
INNOVATION PRIORITIES OF ECONOMIC POLICY OF CHINA

Key words: China, world economy, socialism and market, innovation economics, research center, industrial modernization, special economic zone, Science Park, quarterly modernization

The transition to the innovative path of social-economic development started from the second half of the twentieth century. This provides a qualitatively new level and competitiveness for each country. A number of developing countries seek to create sufficient innovative capacity through the implementation of effective scientific policy and exchange of foreign practices. China is one of the most promising countries in the world of innovation strategies, in which the use of scientific quality, technologies and market mechanisms gave an opportunity to speed up commercialization of scientific research and thereby become the main competitor of developed countries.

СЕРГЕЙ ИГНАТОВ
Соискатель, АГЭУ

**ПЕРСПЕКТИВЫ И ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ
ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ И ВОВЛЕЧЕНИЯ ПИИ
В ЭКОНОМИКУ АРМЕНИИ**

Ключевые слова: прямые иностранные инвестиции (ПИИ), глобальные цепочки создания стоимости (ГЦСС), цепочки создания стоимости ЕАЭС, восходящие и нисходящие связи в ГЦСС

Армения и другие страны – члены ЕАЭС, как показывают тенденции, за последние почти три десятилетия, будучи в разной степени вовлеченные в ГЦСС, не получили таких экономических выгод, как некоторые развивающиеся страны. Основными причинами можно считать технологическую отсталость многих производств, низкий уровень ПИИ по отношению к ВВП, отсутствие как национальных, так и единой для ЕАЭС, стратегий повышения уровня участия в ГЦСС. В связи с тем, что накопленные ПИИ в стране и ее уровень участия в мировых цепочках создания стоимости взаимосвязаны, в статье предлагаются концептуальные подходы инвестиционного сотрудничества стран-членов ЕАЭС, для осуществления перехода стран ЕАЭС с восходящих к нисходящим связям участия в ГЦСС.

Конец XX и начало XXI столетий характеризуются более интенсивными процессами региональной экономической интеграции, которые охватывают не только развитые стра-